

Խանյան Կ.Ս.
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ ՌՈՒՄԵՐԵՆ

Հայ ժողովուրդը 2000թ. նշեց մեծանուն բանաստեղծ, համաշխարհային պոեզիայի անմահ ներկայացուցիչներից մեկի՝ Ավ. Իսահակյանի ծննդյան 125-ամյակը:

25-ամյաժ տասնամյակների ընթացքում ուսումնասիրվել է մեծ բանաստեղծի հարուստ ժառանգությունը, այնուամենայնիվ յուրաքանչյուր նոր սերունդ նրա ստեղծագործության մեջ տեսնում է նոր երանգներ՝ ելնելով իր աշխարհայեցողությունից և գեղագիտական ընկալումներից:

Ավ. Իսահակյանի ստեղծագործության մեջ բազմակողմանի արտացոլված է ժողովրդի հոգեկան հարուստ աշխարհը: Նրա բանաստեղծական արվեստում խտացված են ոչ միայն հայկական, այլ նաև համաշխարհային պոեզիայի լավագույն ավանդույթները: Պատահական չէ, որ Վարպետի ստեղծագործությունը բարձր է գնահատված ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթի ներկայացուցիչների կողմից:

Ավ. Իսահակյանը դեռևս պատանեկան տարիներից ծանոթ է եղել ռուսական պոեզիային: Ռուս գրականության հետ Ավ. Իսահակյանի սերտ առնչությունների մասին քիչ չեն գրվել: Հայտնի են գրականագետներ Կ.Գրիգորյանի, Պ.Մակինցյանի, Ա.Ինժկյանի, Գ.Հովնանի, Հ.Ղանալանյանի, Էդ.Ջրբաշյանի, Գ.Հովհաննիսյանի, Ավիկ Իսահակյանի և մյուսների ուսումնասիրությունները: Առանձնապես ուշագրավ է ակադեմիկոս Լ.Սկրտչյանի «Ավ.Իսահակյանը և ռուս գրականությունը» ուսումնասիրությունը, որտեղ ցույց են տրված Իսահակյանի և ռուս իրականության կապերը, Իսահակյանը որպես ռուս գրականության գիտակ և պրոպագանդիստ, Ավ.Իսահակյանի պոեզիայից կատարված ռուսերեն թարգմանությունների ընթացքը և արվեստը, ինչպես նաև Ավ.Իսահակյանը ռուս քննադատության գնահատմամբ: Անվանի գրականագետը համգամանորեն ներկայացնում է Վարպետի «Աբու Լալա Մահարի» պոեմի բրյուսովյան թարգմանությունը և առանձնապես քննարկական բանաստեղծությունների թարգմանությունները Ալ.Բլոկի կողմից:

Կարող ենք վստահորեն ասել, որ այսօր Ավ.Իսահակյանի պոեզիան ռուս ընթերցողը կարող է կարդալ իր մայրենի լեզվով: Դա ապացույց է այն բանի, որ Իսահակյանի և ռուս գրականության կապը եղել է փոխադարձ: Ավ.Իսահակյանի առաջին բանաստեղծությունը ռուսերեն լույս է տեսել 1899թ. «Ռոսիա և Ասիա» շաբաթաթերթում՝ բանաստեղծ Ա.Գրենի խմբագրությամբ, ապա հրատարակվել են Վարպետի «Մայրիկ, մայրիկ, արևն ինչպե՞ս » և «Թե՛ դեպի կյանքը, թե՛ դեպի մարդիկ» բանաստեղծությունները: Այնուհետև Իսահակյանի «Սիրուն» աղջիկ, երկիր լինիմ» բանաստեղծությունը թարգմանաբար տպագրվեց Սանկտ-Պետերբուրգում լույս տեսնող «Ժվոպիսնոյե օրոգրենիյե» ամսագրում 1900թ. 11-րդ համարում: Այդպես սկսվում է Ավ.Իսահակյանի մուտքը ռուս գրականություն: Ինչպես նշում է Լ.Սկրտչյանը, Իսահակյանի պոեզիայից բարձրարվեստ թարգմանությունները սկսվում են Վ.Բրյուսովից և Ալ.Բլոկից:

Ավ.Իսահակյանի բանաստեղծական շարքերը տպագրվել են «Արտասահմանյան գրականության տեղեկագիր» („Вестник иностранной литературы“), «Կրթություն» („Образование“) (1902), «Մանկական ընթերցանություն» („Детское чтение“) (1903), «Նիվա» (1904) ամսագրերում: Ապա Իսահակյանի բանաստեղծությունները առանձին շարքերով տպագրվել են «Ժամանակակից հայ բանաստեղծներ» („Современные армянские поэты“) (1903), «Ժամանակակից հայ գրականություն» („Современная армянская литература“) (1906), «Հայկական մուսա» („Армянская муза“) (1907) ամսագրերում:

Վարպետի բանաստեղծությունները ռուսերեն առանձին ժողովածուով առաջին անգամ լույս է տեսել 1907թ. «Արաքսի ծաղիկները» („Цветы Аракса“) խորագրով: XX

դարի սկզբից մեծ պոետի բանաստեղծությունների թարգմանությամբ զբաղվել է Վ.Բրյուսովը, Ալ.Բլոկը, Վ.Դերժավինը, Ա.Ախմատովան և շատ ուրիշներ:

Ալ.Բլոկը 1915թ. թարգմանեց Իսահակյանի 20 բանաստեղծություն: Ինչպես նկատել է Լ.Մկրտչյանը, «եթե նա երկու ամսում թարգմանել է Իսահակյանի 20 բանաստեղծությունները, նշանակում է, որ նա անկեղծ հափշտակվել է նրանով»:¹ Ալ.Բլոկի թարգմանած բանաստեղծությունները 1916թ. տպագրվեցին «Հայաստանի պոեզիա» ժողովածուում Վ.Բրյուսովի խմբագրությամբ: Ալ.Բլոկը Իսահակյանից թարգմանել է «Մայրիկիս», «Արագի ափին բոստանըս լինի», «Եվ արծիվ մի սև իջավ սըրաքշավ», «Երազիս տեսա, օրոր ու շորոր», «Բալես ունի հնդու-մաթա», «Օտար, ամայի ծամիեքի վրա» և այլ բանաստեղծություններ, որոնք բարձր են գնահատվել թե՛ ռուս և թե՛ հայ գործիչների կողմից:

Յետագա տարիներին Իսահակյանի ստեղծագործությունները լույս տեսան առանձին ժողովածուներով, որոնց շարքում առանձնանում է Վարպետի 100-ամյակի առթիվ տպագրված ընտրանին, որին մասնակցել են ժամանակակից մի շարք բանաստեղծներ, որտեղ իր յուրահատուկ տեղն ունի անվանի բանաստեղծ-թարգմանչուհի Վ.Չվյազինցևան: Ալ.Բլոկից հետո Վ.Չվյազինցևան ռուս այն բանաստեղծներից է, որ իր ստեղծագործական կյանքի իմաստը տեսել է նաև մեծ Վարպետի երգերի թարգմանության ասպարեզում: Վերոհիշյալ ժողովածուում տեղ են գտել Վարպետից նրա թարգմանած 22 քնարական բանաստեղծությունները:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում այդ թարգմանությունները, բանաստեղծուհին կարողացե՞լ է, արդյոք, Ալ.Բլոկի թարգմանությունների մոտ ներկայացնել Վարպետի երգերի համարժեքը: Այդ թարգմանությունները գնահատելու համար սխալված չենք լինի, եթե բերենք Ավ.Իսահակյանի վերաբերմունքը թարգմանչական արվեստի նկատմամբ: Այդ տեսակետից հետաքրքիր է Վարպետի նամակը ուկրաինացի ականավոր բանաստեղծ Մ.Ռիլսկուն: 1951թ. Մ.Ռիլսկին վարպետին էր ուղարկել ուկրաիներեն լեզվով հրատարակված նրա ընտրանին: Նամակի սկզբում Ավ.Իսահակյանը նախ շնորհակալություն է հայտնում իր բանաստեղծությունները ուկրաինացի ընթերցողին ծանոթացնելու համար: Ապա հայտնում է, որ ինքը հրավիրել է ուկրաիներեն տիրապետող մի ընկերոջ, որպեսզի ժողովածուն կարդա իր համար և օգնի ուկրաիներեն գրելու պատասխան նամակը: Այդ ամենից հետո Ավ.Իսահակյանը գոհունակությամբ հայտնում է. «Եվ այժմ ես համոզվեցի, որ Դուք, Չեր և իմ բարեկամներն իմ բանաստեղծությունները թարգմանել են ճիշտ, լավ, կարողացել են իմ խոհերն ու զգացմունքները, այն բոլորը, ինչ բանկ ու հարազատ է իմ սրտին, հաղորդել զեղեցիկ, նուրբ ու հարուստ լեզվով, անմոռաց, սրտալի երգերի լեզվով, որոնք ես սիրում եմ երկար տարիներ ի վեր»:²

Դժվար չէ նկատել, որ վարպետը թարգմանից պահանջում է քնազրին մնալ հարազատ («ճիշտ»), թարգմանել վարպետորեն («լավ»), պահպանել թարգմանվող հեղինակի «խոհերն ու զգացմունքները», լեզվառճական առանձնահատկությունները:

Վ.Չվյազինցևայի թարգմանությունները համապատասխանում են Վարպետի վերոհիշյալ պահանջներին: Բերենք մի քանի օրինակներ: Ավ.Իսահակյանի «Անտուն գիշերներ» գողտրիկ բանաստեղծությունը վարպետի ստեղծագործական խառնվածքի առաջին շրջանի հիմնալի արտահայտություններից է.

Անտուն գիշերներ,
Անքուն գիշերներ,
Քուրիկ, քեզ համար,
Այրված քո սիրով,
Կարոտիդ հըրով,
Ես շատ լացեցի,
Ես շատ տանջվեցի-
Անքուն գիշերներ,
Անտուն գիշերներ...

Վ.Զվյագինցևի թարգմանել է.

В бездомные ночи,
В бессонные ночи,
Глухою порой,
В разлуке с сестрой,
Скорбя и любя,
Я горько рыдал.
Я столько страдал
В бездомные ночи,
В бессонные ночи.

Թարգմանչուհին պահպանել է վերնագիրը՝ «Անտուն գիշերներ»-., «Бездомные ночи»: Դա կարևորվում է նրանով, որ ընթերցողը հենց առաջին ծանոթությունից հասկանում է բանաստեղծի տրամադրությունները: Թարգմանության մեջ պահպանվել է նաև երգի կառուցվածքը՝ 9 տող, որոնցից առաջին երկուսը կրկնված է նաև վերջում: Մնացած 5 տողում բացահայտված է քնարական հերոսի սիրո ծարավը, կարոտի հուրը, լացը, տանջանքը, այսինքն բանաստեղծի զնահատականը կյանքին՝ սոցիալական ֆոնի վրա: Թարգմանության մեջ մենք հանդիպում ենք „разлука, скорбя, любовь, рыдал, страдал“ բառերին, որ բանաստեղծության հիմնական հենքն են կազմում: Թարգմանչուհին փոխել է միայն արտահայտվելու եղանակը: Երգի հայերեն թարգմանությունը քնարական հերոսը դիմում է հերոսուհուն և զրույց-խոստովանությամբ արտահայտում իր ապրումը, իսկ ռուսերեն թարգմանության մեջ քնարական հերոսը առանց դիմելու «քրոջը», պարզապես ներկայացնում է իր ցավը, իր խոհը: Զվյագինցևայի այս թարգմանության մեջ Ավ.Խսահակյանի հոգու աշխարհն է, նրա զույները:

Վ.Զվյագինցևայի թարգմանություններում իր ճաշակին ու զաղափարներին հարմարեցված փոփոխություններ չկան: Նրա կատարած փոփոխությունները կապված են ռուսաց լեզվի արտահայտամիջոցների, դարձվածների, ժողովրդական բառ ու բանի օգտագործման, բնագրի դիման ու տաղաչափությունը պահպանելու հետ: Վերցնենք Խսահակյանի «Դա՛րդըս լացեք, սարի սըմբուլ» տողով սկսվող բանաստեղծության թարգմանությունը: Բանաստեղծության առաջին տողը ռուսերենում հնչում է. „Поплачь, сумбул-трава, со мной“: Ռուսերեն լեզվում «Դարդըս լացեք» բառակապակցությունը չկա, ուստի թարգմանչուհին օգտագործել է միայն «լացեք» բառը, չկա նաև՝ «Սարի սըմբուլ» արտահայտությունը: Այստեղ Զվյագինցևան վարվել է հմտորեն, օգտագործել է «սըմբուլ» մի այնպիսի բառակապակցության մեջ, որ ռուս ընթերցողը ճանաչի, թե ինչ է «սըմբուլը», ուստի թարգմանել է „сумбул трава“: Եվ որպեսզի պահպանվի քնարական հերոսի լացը, թախիծը, տողի վերջում ավելացրել է „со мной“ բառերը: Եվ ճշտորեն ստացվել է Խսահակյանի քնարական հերոսի դիմումը սարի սըմբուլին, ավան-ավան ծաղիկներին, բաղի բլբուլին, զով հովերին, որ ի դարձը լացեն միասին:

Թարգմանչուհին հասել է իր նպատակին.

Поплачь, сумбул-трава, со мной,
Рыдайте, цветы полей,
Плачь соловей, во тьме ночной,
Прохладю, ветер, вей.

Բանաստեղծության հաջորդ տների պատկերային հյուսվածքի մեջ մտնող «երկինք-զետինք գլխուս մթնան», «անտեր-անտուն կուլան», «յարիս տարան», «յարս ինձի հանեց սրտեն», «անճար թողեց», «անդեղ թողեց» արտահայտությունները համարյա անփոփոխ օգտագործել է թարգմանչուհին, որի շնորհիվ պահպանվել է Իսահակյանական ընթերցության հարազատ շունչը.

Темны просторы немой земли.
Покинутый, плачу я,
Отняли милую, увели,
Отринутый, плачу я.
Не пожалела она меня,
Лишила силы- ушла,
Рану в груди, горячей огня,
Не исцелила-ушла.
Поплачь, сымбул-трава, со мной,
Рыдайте, цветы полей,
Плачь, соловей, во тьме ночной,
Прохладою, ветер, веяй.³

Ավ.Իսահակյանին միշտ հուզել է սեփական ժողովրդի և մարդկության ճակատագիրը: Նրա պոեզիան հարազատ ժողովրդի ճակատագրի և ազատասիրական ոգու արձագանքն է: Ուստի Իսահակյանին լրիվ հասկանալու համար անհրաժեշտ է պատկերացնել նրա պոեզիայի պատմա-սոցիալական ընդգրկումների խորությունը: Նրա ընթերցության տարբեր մտահղացումներում մերթ սիմվոլիկ փոխակերպությամբ, մերթ՝ այլաբանորեն, մերթ՝ անմիջական հույզով, մերթ՝ խոհական ընդհանրացումներով, մեկ՝ անեծք-բողոքով, մեկ՝ օրինանք-հիմնով մարմնավորվել են ժողովրդի տվայտանքներն ու ակնկալությունները: Վ.Ջվյազինցևայի թարգմանությունների մեջ ռուս ընթերցողը կարող է հստակ տեսնել ու պատկերացնել Վարպետի հոգու խառնարանը, նրա երգերի նրբին գույները, լսել աստվածային ձայնն ու մարդկային խռովքը: Վարպետի միայն «Դու չես հասկանա» բանաստեղծությունը՝ գրված 1908թ. բավական է, որպեսզի ընթերցողը պատկերացնի բանաստեղծի հոգու խռովքն ու սրտի գայրույթը չար աշխարհի դեմ.

ես՝ զավակ ճնշված ու դժբախտ ազգի,
Որ արյունով է իր ուղին թրջում,
Որ դարեր, դարեր թափը իր բազկի
Շղթան է կոծում ժանգոտ, շառաչում:⁴

Վ. Ջվյազինցևայի թարգմանությամբ.

Я угнетенного народа сын!
Идет стезей кровавой мой народ
За веком век, во тьме глухих годин,
Насилья цели ржавые грызет.⁵

Ամբողջ բանաստեղծության մեջ փոփոխության չենք հանդիպում: Թարգմանչուհին պահպանել է Ավ.Իսահակյանի բանաստեղծության առանձնահատուկ նրբերանգները: Ինչ վերաբերում է բանաստեղծական ոտքերին, ապա Ջվյազինցևան ենթարկվել է ռուսական տաղաչափության օրենքներին, և այլ կերպ վարվել չէր կարող: Բնագրում տողերը կազմված են 5+5 վանկերից՝ յամբ-անապեստյան սիստեմով: Ռուսական օրինակում ևս

տողերը բաղկացած են 10 վանկից: Սակայն պարզ է, որ հայկական շեշտադրության հետ կապված յամբ-անապեստյան սիստեմը պետք է փոխարինվեր ռուսական շեշտի թելադրած ոտքերի տեսակներով:

Ավ.Իսահակյանի գրական ժառանգության մի մեծ բաժինը նրա խոհափիլիսոփայական բանաստեղծություններն են, որոնցով լրացվել և ամբողջացվել են բանաստեղծի խոհերի և մտորումների համակարգը: Ամնաի երգչի խոհերը միշտ պտտվել են ժողովրդի պատմական լինելիության, սոցիալական-հասարակական վերածնության հարցերի շուրջը: Ժողովրդի և հայրենիքի զարկերակի զգացողությունը փոխանցվել է նրա խոհափիլիսոփայական ընդհանրացումներին, որոնք աչքի են ընկնում ասելիքի խորքով և հակիրճությամբ. նման երգերի թարգմանությունը առաջին հայացքից հեշտ է թվում, սակայն դա պահանջում է խորքային խոհի ու մտորումի գերլարվածություն: Այդ երգերի թարգմանությամբ ևս Ձվյազինցեան պահպանել է Վարպետի խոսքի շերտերն ու փայլը: Ավ.Իսահակյանի մոտ կարդում ենք.

Հայրենի աղբյուր,
Երգերս վրճիտ
Հյուսել կուգայի
Բյուրեղ կարկաչիդ:
Ես հիմա այնպե՛ս
Հոգնած եմ ու լուռ,-
Դու հավերժ կերգես,
Հայրենի աղբյուր...⁶

Վ.Ձվյազինցեայի թարգմանությամբ.

Старый друг, родник,
Прежде каждый миг
В твой живой кристалл
Песни я впадал.
А теперь устал,
Молчаливым стал...
Твой же легкий звон
Мчится в даль времен.⁷

Երկու դեպքերում էլ տողերը կառուցված են 5 վանկից, պատկերային հյուսվածքները համարյա նույնն են, բանաստեղծական բնության հավերժության, մարդու կյանքի անցողիկության զաղափարով: Վ.Ձվյազինցեան այս հաջողությամբ հասել է աշխատասիրության շնորհիվ: Նա առանց փոփոխումներ կատարելու հասել է Ավ.Իսահակյանի խոսքի թարգմանության հաջողությանը:

Ավ.Իսահակյանի 1975թ. հրատարակված ռուսերեն ընտրանիում Վ.Ձվյազինցեայի տարբեր տարիներին թարգմանած բանաստեղծությունների առկայությունը ապացուցում է, որ նա իր ամունը կապել է նաև ամնաի Վարպետի հավերժախոս երգերի հետ՝ իր բարձրարվեստ թարգմանությունների շնորհիվ:

1. Լ.Մկրտչյան, Ավ.Իսահակյանը և ռուս գրականությունը, «Հայաստան», 1975, էջ 180
2. Պ.Տիգինյան, Մ.Ռիսկի, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1973, էջ 198
3. Ав.Исаакян, Избранные произведения, т.1, Москва, 1975, стр.54

4. Ազ.Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, Երևան, 1950, էջ 207
5. Ав.Исаакян, Избранные произведения, т.1, Москва, 1975, стр. 183
6. Ազ.Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, Երևան, 1950, էջ 228
7. Ав.Исаакян, Избранные произведения, т.1, Москва, 1975, стр. 202

ХАНЯН К.С.

ПОЭЗИЯ А.ИСААКЯНА НА РУССКОМ ЯЗЫКЕ

РЕЗЮМЕ

Армянский народ в 2000 году отметил 125-летие со дня рождения великого поэта, одного из гигантов мировой поэзии Ав.Исаакяна.

О связях Ав.Исаакяна с русской литературой писали такие литературоведы как К.Григорян, Г.Овнан, П.Макинцян, Эд.Джрбашян, Г.Ованисян, Авик Исаакян и другие. Отдельно выделяется исследование академика Л.Мкртчяна "Ав.Исаакян и русская литература", где показаны связи Исаакяна с русской действительностью; Исаакян как знаток и пропагандист русской литературы; процесс переводов из Исаакяна на русский язык, как и Исаакян в оценке русской литературной критики.

Впервые стихотворение Исаакяна на русском языке было напечатано в еженедельнике "Россия и Азия" в 1899 году в переводе А.Грена, затем стихотворения Исаакяна печатаются в журналах "Вестник иностранной литературы"(1902), "Детское чтение"(1903), "Нива"(1904). Наконец, под названием "Цветы Араза" в 1907 году издается первый сборник стихов Исаакяна на русском языке.

В 1915 году А.Блок перевел 20 стихотворений Исаакяна, 13 из которых в 1916 году были изданы В.Брюсовым в антологии "Поэзия Армении".

В дальнейшем было издано несколько сборников Исаакяна, где особое место занимает книга "Избранные произведения", изданная в 1975 году к 100-летию юбилею Варпета. Среди выдающихся переводчиков, участвовавших в издании сборника свое особое место занимает русская поэтесса-переводчица В.Звягинцева. После А.Блока В.Звягинцева одна из тех, кто смысл своего творчества видела и в переводах стихотворений Исаакяна.

В данной книге были представлены 22 ее перевода, которые полностью соответствуют требованиям переводческого искусства и не только знакомят русских читателей с поэзией Исаакяна, но и служат взаимообогащению культур обоих народов.

KHANIAN K.S.

THE POETRY OF ISAAKIAN IN THE RUSSIAN LANGUAGE.

SUMMARY.

In 2000 year the Armenian people celebrated the 125-th anniversary of the great poet, one of the giants of world's poetry A.Isaakian.

Such literary critics as K.Grigorian, G.Ovnan, P.Makintian, Ed.Girbashian, G. Ovanisian, Avik Isaakian and others wrote about A.Isaakian's ties with Russian Literature. The investigations of Academician L.Mkrтчian "A.Isaakian and Russian Literature", where he shows Isaakian's ties with Russian reality, the process of translations of Isaakian's works into Russian, as well as Isaakian's activity in the estimation of Russian literary critics must be marked separately.

Isaakian's first poem was published in Russian in weekly "Russia and Asia" in 1899 in the translation of A.Gren, then his poems were published in the journals "Herald of Foreign Literature"(1902), "Children's Reading"(1903), "Niva"(1904). At last, in 1907 the first collection of Isaakian's poems was published under the name of "Flowers of Araz".

In 1915 A.Blok translated Isaakian's 20 poems, 13 of them were published in the anthology "Poetry of Armenia" by V.Brusov in 1916.

Later, some Isaakian's collections were also published. The book "Selected works", published in 1975 in commemoration of the 100-th anniversary of the Master, takes a special place. Among outstanding translators, who took part in publication of the collection, the Russian poetess-translator V.Zvyagintseva takes a special place.

After A.Blok V.Zvyagintseva is one of those translators who considered the translations of Isaakian's poems to be the sense of their activity.

22 of her translations were included in that collection. They fully meet the requirements of the art of translation and introduce not only Isaakian's poetry to Russian readers, but also serve to mutual enrichment of both people's culture.